ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԲՏԱՊ-ԱՊՀ-ԴՇ-2021/4

Ք. Երևան 23 դեկտեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունն, ի դեմս Գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի (այսուհետ նաև՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-ի անվան կրթական ՀԻՄՆԱԴՐԱՄ-ը՝ ի դեմս տնօրեն Սուրեն Վարդանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին նաև՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1630-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի հունվարի 27-ի «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն», «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ», «Հայկական վիրտուալ կամուրջ», «Շուկաների զարգացում եվ միջազգային համագործակցություն» միջոցառումների ծրագրերը հաստատելու մասին»» N61-Ա հրամանի հավելված 2-ի «Գաղափարից մինչև բիզնես» միջոցառման սույն պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելված 5-ով հաստատված դրամաշնորհային ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ գումարից 8,078,000.0 (ութ միլիոն յոթանասունութ հազար) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ նաև՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում և դրա մասին երկօրյա ժամկետում ծանուցել Կազմակերպությանը:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու, դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.10. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի(անձանց) կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված և կնքված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամսին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Միջոցառումներին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված Ծրագրի, այդ թվում՝ Միջոցառումների կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2021 թվականի սեպտեմբերի 04-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, ՀՀ օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն *0010 ք. Երևան,* *Վ.Սարգսյան 3/3* *Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն՝* *h/h 900011031946* *ՀՎՀՀ՝ 02565518*	**«ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-Ի ԱՆՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ** **Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 69ա բն. 7** **ՀՎՀՀ՝ 00230797** **Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ** **Հ/Հ՝ 2050022593851001** **Տնօրեն՝ Սուրեն Վարդանյան**
Գլխավոր քարտուղար՝ **Նարեկ Մելքումյան** (ստորագրություն) Կ.Տ.	**Տնօրեն՝** **Ս. Վարդանյան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
2021 թ. դեկտեմբերի 23-ին
կնքված N ԴՀ-4 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	«Հավք 2021» ԱԹՍ մրցույթի և դրա շրջանակում այլ միջոցառումների ֆինանսավորում	«Հավք 2021» ԱԹՍ մրցույթը նախատեսվում է կազմակերպել 2021թ-ի սեպտեմբերի 18-ին Լոռվա մարզի Լեռնապատ գյուղի տարածքում կառուցված առաջին ԱԹՍ թռիչքուղում, որի նպատակն է	Մրցույթի կազմակերպում	«Հավք 2021» ԱԹՍ մրցույթի և դրա շրջանակում այլ միջոցառումներին ակնկալվում է 21 թիմերի մասնակցություն, որից 13 թիմ՝ դպրոցական, 6 թիմ՝ սիրողական և 2 թիմ՝ պրոֆեսիոնալ: Մրցույթը կխթանի Հայաստանում ստեղծել ԱԹՍ	21.12.2021թ	30.11.2021թ. Հանձնման-ընդունման ակտ Հաշվետվություն	8 078 000

		երիտասարդների շրջանում զարգացնել տեխնոլոգիական, ինժեներական, ավիոնիկայի և ԱԹՍ արդյունաբերության հետ կապված հմտությունները: ԱԹՍ մրցույթի կազմակերպմամբ հնարավորություն է ստեղծվում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների սաների, տեխնոլոգիական կրթություն ստացող ուսանողների և Հայաստանում գործող ԱԹՍ արդյունաբերության մեջ ընդգրկված ընկերությունների համար ստեղծել հարթակ մրցակցելու և կատարելագործելու իրենց հմտությունները:		արդյունաբերությամբ զբաղվող ընկերություններ, ինչպես նաև հնարավորություն կընձեռնի երիտասարդներին մասնագիտական կողմնորոշման, երկակի նշանակության տեխնոլոգիաների զարգացման և սեփական երկրի անվտանգության համակարգերի մշակմանը մասնակցելու համար:			
	Ընդամենը						8 078 000

Հավելված 2
2021 թ. Դեկտեմբերի 23-ին
կնքված N _____ պայմանագրի
ՀՇ-4

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

Ընդհանուր տեղեկատվություն

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված 3
2021թ. Դեկտեմբերի 23-ին
կնքված N ____ պայմանագրի
ԴՇ-4

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Միջոցառման															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումը նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ գրաֆիկի՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
													8 078 000	8 078 000	8 078 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

Պետական մարմին	Կազմակերպություն
Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն *0010 ք. Երևան,* *Վ.Սարգսյան 3/3* *Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն՝* *հ/հ 900011031946* *ՀՎՀՀ՝ 02565518*	«ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-Ի ԱՆՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 69ա բն. 7 ՀՎՀՀ՝ 00230797 Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022593851001
Գլխավոր քարտուղար՝ **Նարեկ Մելքումյան** (ստորագրություն) Կ.Տ.	**Տնօրեն՝ Սուրեն Վարդանյան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 4
2021 թ. Դեկտեմբերի 23-ի
կնքված N _____ պայմանագրի
ՊԵ-4

Կազմակերպություն	Պետական մարմին
«ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-Ի ԱՆՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 69ա բն. 7 ՀՎՀՀ՝ 00230797 Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022593851001	**Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն** *0010 ք. Երևան,* *Վ.Սարգսյան 3/3* *Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն՝* *h/h 900011031946* *ՀՎՀՀ՝ 02565518*
Տնօրեն՝ Սուրեն Վարդանյան _____ (ստորագրություն) Կ.Տ.	**Գլխավոր քարտուղար՝** **Նարեկ Մելքումյան** _____ (ստորագրություն) Կ.Տ.

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝	**Ծառայությունն ընդունեց՝**
_____ Ստորագրություն _____ ազգանուն, անուն Կ.Տ.	_____ Ստորագրություն _____ ազգանուն, անուն Կ.S.

Հավելված 5
2021թ. Սեպտեմբերի 23-ի
կնքված N _____ պայմանագրի
ԴՇ-4

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1. «Հաւք 2021»

Կարեն Վարդանյանի անվան կրթական հիմնադրամի կողմից սեպտեմբերի 18-ին Լեռնապատ գյուղի ԱԹՍ փորձակայանում անցկացվելու է «Հաւք 2021» ԱԹՍ առաջին մրցույթը: Մրցույթի նպատակն է մասնակիցներից լուծումներ ստանալ՝ անօդաչու թռչող սարքերի միջոցով արտակարգ իրավիճակներում փրկարարական միջոցառումների արդյունավետության բարձրացման համար: Մրցույթն իրականացվելու է երեք անվանակարգերում՝ դպրոցահասակներ, սիրողական խմբեր ու սկսնակ ընկերություններ և արհեստավարժ ընկերություններ: Հաշվի առնելով այս խմբերը՝ առաջադրվող խնդիրները լինելու են պարզ, միջին և բարդ: Այս տարի մասնակից թիմերի թիվը 21 է: Մցույթը նպատակ ունի դառնալ ամենամյա:

Խմբերի առաջ դրվելու է երեք խնդիր. կրակի օջախի հայտնաբերում, տուժածի հայտնաբերում և գոյատևման փաթեթի առաքում, հեղուկ նյութերի սփռում: Նման խնդիրների լուծումը կարող է էապես բարելավել փրկարարի և առաջին արձագանքողի աշխատանքի արդյունավետությունը:
Մրցույթի մասնակցության հայտ ներկայացնող

Մասնակից թիմերի աշխարհագրությունը բավականին ընդգրկուն է. գրանցվել են թիմեր Վանաձորից, Թալինից, Գյումրիից, Գորիսից, Գավառից, Այգուտից, Դիլիջանից, Եղեգնաձորից, Աբովյանից և Երևանից:

Պետական մարմին	Կազմակերպություն
Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն *0010 ք. Երևան,* *Վ.Սարգսյան 3/3* *Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն՝* *h/h 900011031946* *ՀՎՀՀ՝ 02565518*	«ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ»-Ի ԱՆՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Հասցե՝ ք. Երևան, Այգեձոր 69ա բն. 7 ՀՎՀՀ՝ 00230797 Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022593851001
Գլխավոր քարտուղար՝ **Նարեկ Մելքումյան** (ստորագրություն) Կ.Տ.	**Տնօրեն՝ Սուրեն Վարդանյան** (ստորագրություն) Կ.Տ.